

4.3.2. Ներքին զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների 2003թ. հունվար-մարտին հանրապետության տարածքում տեղաբաշխված կուլեկտիվ և անհատական զբոսաշրջիկների տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել են 17988 զբոսաշրջիկներ (ՀՀ ռեզիդենտներ), որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 0.4%-ով:

Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

	2002 թ. հունվար-մարտ	2003 թ. հունվար- մարտ	(մարդ) Տեսակարար կշիռը (2003թ. հունվար-մարտ,%)
Ընդամենը զբոսաշրջիկներ³	18067	17988	100
<i>որոնցից ըստ նպատակի՝</i>			
գործնական	8953	6846	38.1
հանգստի և ժամանցի	925	6471	36.0
բուժման	0	16	0.1
այլ	8189	4655	25.8

³ Բերված տվյալները արտացոլում են միայն հյուրանոցներում, հյուրանոցային հանգրվաններում, առողջարաններում, հանգստյան տներում հաշվառված զբոսաշրջիկներին: